ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Արմեն Արարատի Միրզոյանի՝ «Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել Պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Քաղաքական կայունության հիմնախնդիրը քաղաքագիտության կարևոր և մշտարդիական հետազոտական ուղղություններից է: Պետությունների քաղաքական զարգացման արդյունավետությունը, ինստիտուցիոնալ դիմակայունությունը, հանրային համերաշխության մակարդակը, անվտանգային մարտահրավերներին դիմագրավելու կարողությունը և երկարաժամկետ զարգացման հեռանկարները մեծապես պայմանավորված են քաղաքական համակարգի կայունության աստիճանով: Առավել ևս, ժամանակակից աշխարհում, երբ պետությունները գործում են հարափոփոխ աշխարհաքաղաքական, տնտեսական և անվտանգային միջավայրում, քաղաքական կայունության ապահովման խնդիրն առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մակարդակներում:

Վերոնշյալի համատեքստում Արմեն Միրզոյանի ատենախոսությունը նվիրված է քաղաքական կայունության տեսամեթոդաբանական հիմքերի, դրա չափման ժամանակակից մոտեցումների, ինչպես նաև Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության համեմատական վերլուծությանը: Հետազոտության առանցքում է քաղաքական կայունության բազմաչափ բնույթը, որը դիտարկվում է ոչ միայն որպես քաղաքական համակարգի վիճակ, այլև որպես դինամիկ գործընթաց, ինչն արտահայտում է համակարգի՝ ներքին և արտաքին մարտահրավերներին ադապտացվելու և իր հիմնական գործառույթները պահպանելու կարողությունը:

Հարկ է նշել, որ թեմայի ընտրությունը գիտական և գործնական տեսանկյունից հիմնավորված է: Հայաստանի քաղաքական զարգացման առանձնահատկությունները, անվտանգային բարդ միջավայրը, վերջին տասնամյակների ներքաղաքական վերափոխումները և պետական ինստիտուտների դիմակայունության խնդիրը քաղաքական կայունության ուսումնասիրությանը հաղորդում են առանձնահատուկ արդիականություն: Միաժամանակ, Իսրայելի փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համեմատական վերլուծության հիման վրա բացահայտել քաղաքական կայունության ապահովման այն ինստիտուցիոնալ և քաղաքական

կառուցակարգերը, որոնք կարող են օգտակար լինել նաև Հայաստանի քաղաքական համակարգի հետագա զարգացման համատեքստում:

Ներկայացվող ատենախոսության նպատակը քաղաքական կայունության տեսական և մեթոդաբանական հիմքերի համակողմանի ուսումնասիրությունն է, Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության միտումների բացահայտումն ու համեմատական գնահատումը, ինչպես նաև քաղաքական կայունության ամրապնդման այն կառուցակարգերի առանձնացումը, որոնք կիրառվում են Իսրայելում և կարող են տեղայնացվել Հայաստանի պայմաններում: Միաժամանակ, հետազոտական խնդիրները տրամաբանորեն բխում են նպատակից և ուղղված են ինչպես քաղաքական կայունության հայեցակարգային վերահիմաստավորմանը, այնպես էլ դրա էմպիրիկ չափման ու համեմատական վերլուծության իրականացմանը:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Առաջին գլխում ներկայացվում են քաղաքական կայունության տեսամեթոդական հիմքերը, քննարկվում են քաղաքական կայունության վերաբերյալ տարբեր տեսական մոտեցումներ և քաղաքական համակարգի կայունության չափման հիմնական մեթոդներն ու ինդեքսները: Երկրորդ գլխում իրականացվում է Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության համեմատական վերլուծություն, ուսումնասիրվում են քաղաքական կայունության հիմնական ցուցիչները, գնահատվում են երկու երկրների քաղաքական համակարգերի զարգացման միտումները և առանձնացվում Իսրայելի քաղաքական փորձից բխող այն կառուցակարգերը, որոնք կարող են կիրառական նշանակություն ունենալ Հայաստանի Հանրապետության համար:

Հարկ է ընդգծել, որ ատենախոսության կարևոր արժանիքներից է հետազոտության տեսամեթոդական հենքի հստակ ձևակերպումը: Հեղինակը քաղաքական կայունության հիմնախնդիրը դիտարկում է համակարգային մոտեցման շրջանակներում՝ այն մեկնաբանելով որպես բազմաչափ և դինամիկ երևույթ, որը ձևավորվում է քաղաքական, սոցիալական, տնտեսական և անվտանգային գործոնների փոխազդեցության արդյունքում: Միաժամանակ, աշխատանքում կիրառվել են համեմատական, պատմահամեմատական, դեպքային ուսումնասիրության, վիճակագրական տվյալների վերլուծության և ժամանակային շարքերի ուսումնասիրման մեթոդներ, որոնք հնարավորություն են տվել խնդրո առարկա հարցը դիտարկել ինչպես տեսական, այնպես էլ կիրառական հարթություններում: Հատկանշական է նաև, որ հետազոտության շրջանակներում Հեղինակը կատարել է մեծածավալ քանակական տվյալների հավաքագրում և մշակում՝ հիմնվելով միջազգային ինդեքսների, պաշտոնական վիճակագրական տվյալների և տարբեր միջազգային կազմակերպությունների հրապարակումների վրա, ինչը զգալիորեն բարձրացնում է իրականացված վերլուծության փաստական հենքը և գիտական հիմնավորվածությունը:

Դրական գնահատանքի է արժանի նաև այն, որ Հեղինակը քաղաքական կայունության խնդիրը չի սահմանափակում միայն տեսական քննարկումներով, այլ այն դիտարկում է նաև համեմատական քաղաքագիտության տրամաբանության շրջանակում՝ Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի համադրման միջոցով: Նման մոտեցումը հնարավորություն է տվել ոչ միայն բացահայտել երկու երկրների քաղաքական զարգացման առանձնահատկություններն ու տարբերությունները, այլև վերհանել քաղաքական կայունության վրա ազդող այն հիմնական գործոնները, որոնք ունեն համեմատական նշանակություն փոքր և միջին պետությունների քաղաքական զարգացման համատեքստում:

Միաժամանակ, ատենախոսության գիտական նորույթը, ընդհանուր առմամբ, հիմնավորված է: Հատկանշական է, որ Ա. Միրզոյանը փորձ է կատարել քաղաքական կայունության վերաբերյալ առկա տեսական մոտեցումների քննադատական վերլուծության հիման վրա ձևակերպել քաղաքական կայունության հեղինակային սահմանում՝ շեշտադրելով քաղաքական համակարգի ադապտիվ ինքնակարգավորման կարողությունը: Բացի այդ, գիտական հետաքրքրություն է ներկայացնում նաև քաղաքական կայունության ուսումնասիրությունը արդիականացման, ինստիտուցիոնալ, կոնֆլիկտների, պետականակենտրոն, կառուցվածքային-ֆունկցիոնալ և ռացիոնալ ընտրության տեսությունների համատեքստում, ինչը հնարավորություն է տվել խնդիրը դիտարկել բազմատեսանկյուն և համալիր ձևով:

Ուշադրության արժանի է նաև այն, որ աշխատանքում առաջին անգամ իրականացվել է Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության համեմատական վերլուծություն՝ Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի և մի շարք միջազգային ինդեքսների համակցված կիրառման միջոցով: Հեղինակը ոչ միայն ներկայացրել է երկու երկրների քաղաքական համակարգերի կայունության միտումները, այլև փորձել է բացահայտել դրանց ձևավորման պատճառահետևանքային կապերը և քաղաքական գործընթացների ներքին տրամաբանությունը:

Կարևոր է նշել, որ աշխատանքի տեսական նշանակությունը պայմանավորված է քաղաքական կայունության վերաբերյալ գիտական պատկերացումների ընդլայնման փորձով, քաղաքական կայունության հայեցակարգի վերահիմաստավորմամբ և տեսական տարբեր մոտեցումների համադրմամբ: Միաժամանակ, ատենախոսությունն ունի նաև գործնական նշանակություն, քանի որ ներկայացված առաջարկություններն ուղղված են Հայաստանի քաղաքական համակարգի կայունության ամրապնդմանը, պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը և ինստիտուցիոնալ դիմակայունության զարգացմանը: Այդ առումով հետազոտության արդյունքները կարող են հետաքրքրություն ներկայացնել ինչպես քաղաքագետների և հարակից ոլորտների

հետազոտողների, այնպես էլ քաղաքական որոշումներ կայացնողների և պետական կառավարման ոլորտի մասնագետների համար:

Անդրադառնալով ատենախոսության գլուխներին՝ նշենք, որ առաջին գլուխը՝ «Քաղաքական կայունության տեսամեթոդական հիմքերը», նվիրված է հետազոտության տեսական և հայեցակարգային հենքի ձևավորմանը: Այս հատվածն ունի կարևոր մեթոդաբանական նշանակություն, քանի որ այստեղ է Ա. Միրզոյանը սահմանում քաղաքական կայունության վերաբերյալ իր հետազոտական մոտեցումը և ներկայացնում խնդրի տեսական մեկնաբանության հիմնական ուղղությունները:

Նշված գլխի առաջին ենթագլխում Հեղինակը մանրամասն ուսումնասիրում է «քաղաքական կայունություն» հասկացության ձևավորման և զարգացման պատմությունը, ներկայացնում է կայունության վերաբերյալ տարբեր գիտակարգերում կիրառվող մոտեցումները, ինչպես նաև քաղաքական կայունության սահմանումների հիմնական խմբերը: Հատկանշական է, որ Հեղինակը չի սահմանափակվում առանձին հեղինակների տեսակետների ներկայացմամբ, այլ իրականացնում է դրանց համեմատական քննություն՝ բացահայտելով յուրաքանչյուր մոտեցման ուժեղ և թույլ կողմերը: Այս առումով, գիտական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես քաղաքական կայունության վերաբերյալ տարբեր մեկնաբանությունների համակարգումը և դրանց հիման վրա առավել համապարփակ սահմանման ձևակերպման փորձը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը նվիրված է քաղաքագիտության հիմնական տեսությունների համատեքստում քաղաքական կայունության խնդրի ուսումնասիրությանը, որը Հեղինակը դիտարկում է արդիականացման, ինստիտուցիոնալ, կոնֆլիկտների, պետականակենտրոն, կառուցվածքային-ֆունկցիոնալ և ռացիոնալ ընտրության տեսությունների շրջանակներում՝ բացահայտելով, թե քաղաքական կայունության ինչպիսի աղբյուրներ և կառուցակարգեր են առանձնացվում յուրաքանչյուր տեսական դպրոցի կողմից: Գնահատալի է, որ տեսական մոտեցումները ոչ թե ներկայացված են մեկուսացված կերպով, այլ փորձ է արվել բացահայտել դրանց փոխլրացնող և երբեմն նաև հակասական բնույթը, ինչի արդյունքում ձևավորվում է քաղաքական կայունության վերաբերյալ համեմատաբար ամբողջական տեսական պատկեր:

Վերջապես՝ առաջին գլխի երրորդ ենթագլխում Ա. Միրզոյանը անդրադառնում է քաղաքական կայունության չափման և գնահատման ժամանակակից մեթոդներին: Քննարկվում են քաղաքական կայունության գնահատման համատեքստում միջազգային հեղինակավոր ինդեքսների մեթոդաբանությունները, դրանց հնարավորություններն ու սահմանափակումները: Առանձին ուշադրություն է դարձվում քաղաքական համակարգի կայունության ինդեքսին, որի կիրառումը հետագայում դառնում է ամբողջ հետազոտության էմպիրիկ հիմքերից մեկը: Այստեղ կարևոր է, որ Հեղինակը ոչ միայն

նկարագրում է տարբեր ինդեքսներ, այլև փորձում է հիմնավորել Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի ուսումնասիրության համար դրանց համադրելիությունն ու կիրառելիությունը:

Ընդհանուր առմամբ, առաջին գլուխը հաջողությամբ կատարում է հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքի ձևավորման գործառույթը: Այն ապահովում է անհրաժեշտ հայեցակարգային հենք հետագա էմպիրիկ ուսումնասիրությունների համար և ցույց է տալիս Հեղինակի բավարար տեղեկացվածությունը քաղաքական կայունության վերաբերյալ միջազգային գիտական գրականության և տեսական մոտեցումների շուրջ:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Քաղաքական համակարգի կայունության համեմատական վերլուծությունն ու Իսրայելի ինստիտուցիոնալ փորձի կիրառման հնարավորությունները Հայաստանում», հետազոտության առանցքային և առավել ինքնուրույն հատվածն է, որտեղ տեսական մակարդակում ձևավորված մոտեցումները ստանում են գործնական և էմպիրիկ կիրառություն:

Նշված գլխի առաջին ենթագլխում Հեղինակը քաղաքական համակարգի կայունության խնդիրը դիտարկում է մի շարք միջազգային հեղինակավոր ինդեքսների շրջանակներում՝ իրականացնելով Հայաստանի և Իսրայելի ցուցանիշների համեմատական ուսումնասիրություն: Մասնավորապես, վերլուծության առարկա են դարձել Համաշխարհային ռազմականացման ինդեքսը, Համաշխարհային խաղաղության ինդեքսը, Օտարերկրյա ուղղակի ներդրումների վստահության ինդեքսը, Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը, Տնտեսական ազատության ինդեքսը և Փխրուն երկրների ինդեքսը: Հեղինակը ոչ միայն ներկայացնում է համապատասխան ցուցանիշների շարժընթացը, այլև փորձում է բացահայտել դրանց փոխկապակցվածությունը քաղաքական համակարգի կայունության հետ: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս քաղաքական կայունությունը դիտարկել ոչ միայն քաղաքական, այլև սոցիալ-տնտեսական, անվտանգային և ինստիտուցիոնալ գործոնների համատեքստում, ինչը զգալիորեն նպաստում է հետազոտության համալիր բնույթի ապահովմանը:

Միաժամանակ, երկրորդ ենթագլխում իրականացվում է Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության համեմատական ուսումնասիրությունը Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի կիրառմամբ: Հատկանշական է, որ Հեղինակն ուսումնասիրում է բավականին երկար ժամանակահատված (2008-2023 թթ.), ինչը հնարավորություն է տալիս դիտարկել ինչպես հարաբերական կայունության, այնպես էլ ճգնաժամային փուլերը և բացահայտել քաղաքական համակարգերի զարգացման երկարաժամկետ միտումները: Դրական կարելի է գնահատել նաև այն, որ Հեղինակը սահմանափակված չէ միայն թվային ցուցանիշների ներկայացմամբ, այլև փորձել է դրանց հիման վրա կատարել քաղաքական գործընթացների բովանդակային

մեկնաբանություն՝ կապելով ցուցանիշների փոփոխությունները կոնկրետ քաղաքական իրադարձությունների, ինստիտուցիոնալ վերափոխումների, անվտանգային մարտահրավերների և սոցիալ-տնտեսական զարգացումների հետ: Արդյունքում, ձևավորվում է երկու երկրների քաղաքական համակարգերի կայունության գործոնների համեմատաբար ամբողջական պատկեր:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում ուսումնասիրվում են Իսրայելի քաղաքական համակարգի կայունության ապահովման ինստիտուցիոնալ և քաղաքական մեխանիզմները, ինչպես նաև գնահատվում է դրանց հնարավոր կիրառելիությունը Հայաստանի պայմաններում: Հեղինակը փորձում է բացահայտել այն կառավարման, ինստիտուցիոնալ և քաղաքական գործիքները, որոնք նպաստել են Իսրայելի քաղաքական համակարգի հարաբերական կայունության պահպանմանը նույնիսկ անվտանգային մշտական սպառնալիքների պայմաններում: Միաժամանակ, դրական է, որ աշխատանքում չի կիրառվում մեխանիկական փոխառության մոտեցում: Ընդհակառակը, փորձ է արվում գնահատել յուրաքանչյուր առաջարկվող մեխանիզմի տեղայնացման հնարավորությունները՝ հաշվի առնելով Հայաստանի քաղաքական, իրավական, հասարակական և անվտանգային առանձնահատկությունները: Այս առումով, վերջին հանգամանքը հետազոտությանը հաղորդում է ոչ միայն գիտական, այլև կիրառական նշանակություն:

Ընդհանրացնելով՝ երկրորդ գլուխը կարելի է գնահատել որպես ատենախոսության առավել ինքնուրույն և գործնական արժեք ունեցող հատված, որում ներկայացված համեմատական վերլուծությունները, մեծածավալ քանակական տվյալների օգտագործումը, քաղաքական գործընթացների պատճառահետևանքային մեկնաբանությունները և քաղաքական կայունության ամրապնդման վերաբերյալ ներկայացված առաջարկությունները վկայում են Հեղինակի՝ համեմատական քաղաքագիտության, քաղաքական ինստիտուտների և քաղաքական գործընթացների ուսումնասիրման ոլորտում բավարար մասնագիտական պատրաստվածության մասին: Հատկապես ուշադրության է արժանի այն, որ քաղաքական կայունության խնդիրը դիտարկվում է ոչ թե մեկ առանձին գործոնի, այլ քաղաքական, սոցիալական, տնտեսական և անվտանգային բաղադրիչների փոխազդեցության համատեքստում, ինչը հետազոտությանը լրացուցիչ համակարգային բնույթ է հաղորդում:

Վերոնշյալի համատեքստում՝ ատենախոսության բովանդակային և մեթոդաբանական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել աշխատանքի մի շարք կարևոր արժանիքներ:

1. Աշխատանքն առանձնանում է թեմայի նշանակալի արդիականությամբ, քանի որ քաղաքական կայունության հիմնախնդիրը ներկայումս գտնվում է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական քաղաքագիտական հետազոտությունների առանցքում:

Միաժամանակ, Հայաստանի առջև ծառացած անվտանգային, քաղաքական և ինստիտուցիոնալ մարտահրավերների պայմաններում քաղաքական համակարգի կայունության ուսումնասիրությունը ձեռք է բերում առանձնահատուկ գիտական և գործնական նշանակություն:

2. Գովելի է այն, որ Ա. Միրզոյանը քաղաքական կայունության հիմնախնդիրը դիտարկում է համալիր և բազմագործոն մոտեցման շրջանակներում՝ հրաժարվելով այն բացառապես քաղաքական կամ ինստիտուցիոնալ գործոններով բացատրելու միակողմանի մոտեցումներից: Այս առումով, ատենախոսությունում քաղաքական կայունությունը ներկայացվում է որպես քաղաքական, սոցիալական, տնտեսական և անվտանգային գործոնների փոխազդեցության արդյունք, ինչը լիովին համապատասխանում է ժամանակակից քաղաքագիտական հետազոտությունների հիմնական միտումներին:

3. Աշխատանքի կարևոր ձեռքբերումներից է քաղաքական կայունության վերաբերյալ տեսական մոտեցումների համակարգված և համակողմանի ուսումնասիրությունը: Հեղինակը կարողացել է մեկ հետազոտության շրջանակներում համադրել քաղաքական կայունության վերաբերյալ տարբեր տեսություններ և հայեցակարգեր՝ բացահայտելով դրանց ընդհանուր և առանձնահատուկ հատկանիշները:

4. Գիտական հետաքրքրություն է ներկայացնում քաղաքական կայունության հեղինակային սահմանման ձևակերպման փորձը: Անկախ այն հանգամանքից, որ քաղաքական կայունության վերաբերյալ ակադեմիական բանավեճերը շարունակվում են, Հեղինակի առաջարկած մոտեցումը քաղաքական կայունությունը դիտարկում է որպես համակարգի ադապտիվ ինքնակարգավորման կարողության վրա հիմնված դինամիկ գործընթաց, ինչը հնարավորություն է տալիս խնդիրը դիտարկել առավել լայն և ժամանակակից տեսանկյունից:

5. Ատենախոսության առավել ուժեղ կողմերից է իրականացված համեմատական հետազոտությունը: Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի համադրումը հետաքրքիր և գիտականորեն հիմնավորված հետազոտական լուծում է, քանի որ երկու երկրներն էլ գործում են բարդ անվտանգային միջավայրում, առերեսվում են արտաքին սպառնալիքների և միաժամանակ ունեն քաղաքական զարգացման ու ինստիտուցիոնալ կառուցվածքի տարբեր մոդելներ: Այս հանգամանքը հնարավորություն է տվել բացահայտել քաղաքական կայունության վրա ազդող մի շարք օրինաչափություններ:

6. Աշխատանքի կարևոր արժանիքներից է մեծածավալ էմպիրիկ նյութի և քանակական տվյալների ներգրավումը: Միջազգային ինդեքսների, պաշտոնական վիճակագրական տվյալների, միջազգային կազմակերպությունների հաշվետվությունների և այլ աղբյուրների կիրառումը զգալիորեն բարձրացնում է հետազոտության փաստական հիմնավորվածության մակարդակը և հնարավորություն տալիս քաղաքական

կայունության խնդիրը դիտարկել ոչ միայն տեսական, այլև չափելի և համադրելի ցուցանիշների հիման վրա:

7. Դրական պետք է գնահատել այն, որ աշխատանքը չի սահմանափակվում միայն տեսական վերլուծությամբ և համեմատական չափումներով, այլ պարունակում է նաև կիրառական նշանակություն ունեցող առաջարկություններ: Այսպես, Իսրայելի քաղաքական համակարգի փորձի ուսումնասիրության հիման վրա Հեղինակը փորձում է առանձնացնել այն ինստիտուցիոնալ և քաղաքական մեխանիզմները, որոնք կարող են նպաստել Հայաստանի քաղաքական համակարգի կայունության ամրապնդմանը: Նման մոտեցումը հետազոտության արդյունքները դարձնում է պահանջված ոչ միայն ակադեմիական, այլև գործնական քաղաքականության մշակման տեսանկյունից:

8. Վերջապես՝ աշխատանքի ընդհանուր կառուցվածքը տրամաբանական է, հետազոտության նպատակը, խնդիրները, առարկան և օբյեկտը փոխկապակցված են, իսկ հիմնական եզրակացությունները, ընդհանուր առմամբ, բխում են կատարված տեսական և էմպիրիկ ուսումնասիրություններից, ինչը կարևոր նախապայման է գիտական աշխատանքի ամբողջականության և ներքին տրամաբանության ապահովման համար:

Այսուհանդերձ, ատենախոսությունը զերծ չէ նաև որոշակի խնդիրներից և հետագա քննարկման արժանի հարցադրումներից, որոնցից նպատակահարմար ենք համարում առանձնացնել հետևյալները.

1. Թեև աշխատանքում հիմնավորվում է Հայաստանի և Իսրայելի ընտրությունը որպես համեմատական վերլուծության դեպքեր, այդուհանդերձ հետազոտությունը կշահեր, եթե դեպքերի համադրելիության տեսամեթոդաբանական հիմքերը առավել խորքային ներկայացվեին: Մասնավորապես, ցանկալի էր առավել հստակ ցույց տալ, թե ինչպես են համադրվում հետխորհրդային անցումային պետության և բարձր ինստիտուցիոնալացված խորհրդարանական ժողովրդավարության առանձնահատկությունները՝ հաշվի առնելով դրանց քաղաքական մշակույթի, կուսակցական համակարգերի, ժողովրդագրական կառուցվածքի, տնտեսական ներուժի և անվտանգային միջավայրի էական տարբերությունները:

2. Ատենախոսության նորույթներից է քաղաքական կայունության հեղինակային սահմանումը՝ «ադապտիվ ինքնակարգավորման» շեշտադրմամբ: Միաժամանակ, աշխատանքը տեսական և մեթոդաբանական առումով առավել կշահեր, եթե այդ սահմանման բաղադրիչները առավել հստակ «գործառնականացվեին», մասնավորապես՝ ցույց տրվեր, թե սահմանման մեջ ընդգրկված ինստիտուցիոնալ կայունությունը, լեգիտիմությունը, կանխատեսելիությունը և ադապտացիոն կարողությունը կոնկրետ ինչ ցուցիչների, չափորոշիչների կամ որակական գնահատման մեխանիզմների միջոցով են արտահայտվում հետազոտության էմպիրիկ մասում:

3. Հետազոտության մեջ կիրառված քանակական տվյալների և միջազգային ինդեքսների մեծ ծավալը աշխատանքի ուժեղ կողմերից է: Այնուամենայնիվ, ցանկալի էր առավել հանգամանորեն քննարկել օգտագործված ինդեքսների մեթոդաբանական սահմանափակումները, հատկապես դրանց տարբեր սանդղակների, տվյալների աղբյուրների, չափման տարիների, ընկալումային բնույթի ցուցիչների և համադրելիության խնդիրների տեսանկյունից: Միաժամանակ, առավել կարևոր է նաև Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի կշիռների կիրառման դեպքում ցույց տալ, թե որքանով են այդ կշիռները հավասարապես կիրառելի Իսրայելի դեպքում, քանի որ ինդեքսը մինչ այդ հիմնականում կիրառվել է այլ տարածաշրջանային համատեքստերում:

4. Աշխատանքում մի շարք դեպքերում քանակական տվյալների շարժընթացից արվում են պատճառահետևանքային ընդհանրացումներ: Օրինակ՝ օտարերկրյա ներդրումների, տնտեսական աճի, ռազմական գործողությունների, ներքաղաքական բողոքների և ՔՀԿԻ փոփոխությունների միջև կապերը վերլուծվում են բավականին համոզիչ, սակայն ոչ միշտ է բավարար չափով տարանջատվում ժամանակային համընկնումը, փոխկապակցվածությունը և ուղղակի պատճառականությունը: Հետազոտությունը մեծապես կշահեր, եթե որոշ առանցքային եզրակացություններ լրացվեին պատճառականության ստուգման առավել հստակ գործիքներով (Օրինակ՝ գործընթացի հետագծման (անգլ.՝ process tracking), այլընտրանքային բացատրությունների քննարկման կամ զգայունության վերլուծության (անգլ.՝ sensitivity analysis) միջոցով):

5. Ատենախոսության կիրառական նշանակությունը բարձրացնում են Իսրայելի փորձի հիման վրա Հայաստանի համար առաջարկվող ինստիտուցիոնալ լուծումները: Այդուհանդերձ, դրանցից մի քանիսը՝ մասնավորապես վարչապետին անվստահություն հայտնելու ընթացակարգի լրացումը կառավարության ամբողջական կազմի նախապես ներկայացման պահանջով, Պետական վերահսկիչի ինստիտուտի ներդրումը և ԱԺ պաշտպանության ու անվտանգության հարցերի հանձնաժողովի լիազորությունների ընդլայնումը, կարիք ունեին առավել մանրամասն իրավաքաղաքական իրագործելիության գնահատման: Այս առումով, օգտակար կլիներ առանձին վերլուծել այդ առաջարկների հնարավոր սահմանադրական, ինստիտուցիոնալ, քաղաքական և վարչարարական ռիսկերը:

6. Աշխատանքում Իսրայելի փորձը ներկայացվում է որպես Հայաստանի համար կարևոր համեմատական աղբյուր, ինչը հիմնավորված է: Այնուամենայնիվ, որոշ հատվածներում ցանկալի կլիներ առավել ընդգծված ներկայացնել նաև այդ փորձի սահմանափակումները: Մասնավորապես՝ Իսրայելի բազմակուսակցական և կոալիցիոն քաղաքական համակարգից բխող կառավարման առանձնահատկությունները,

դատաիրավական բարեփոխումների շուրջ հասարակական բևեռացումը, արաբական բնակչության քաղաքական ինտեգրման մարտահրավերները և Պաղեստինյան հիմնախնդրի շարունակական ազդեցությունը կարող էին առավել համակարգված քննարկվել որպես այնպիսի գործոններ, որոնք սահմանափակում են իսրայելական փորձի առանձին տարրերի անմիջական կիրառելիությունը Հայաստանի պայմաններում:

7. Աշխատանքում կարևոր և արդիական է անվտանգության ու խաղաղության վերաբերյալ ինստիտուցիոնալ խոսույթի զարգացման առաջարկը: Այնուամենայնիվ, աշխատանքի այս հատվածն էապես կշահեր, եթե Հեղինակը առավել հստակ սահմաներ անվտանգության ոլորտում «բացության» և պետական գաղտնիքի միջև հավասարակշռության մեխանիզմը: Կարծում ենք, որ պաշտպանական և հետախուզական ոլորտներում հանրային վերահսկողության ընդլայնումը կարևոր է, սակայն դրա գործնական կիրառման դեպքում անհրաժեշտ է նաև հաշվի առնել օպերատիվ անվտանգության, տեղեկատվության չարաշահման և քաղաքականացման հնարավոր ռիսկերը:

Ինչևէ, նշված դիտողությունները հիմնականում կրում են տեսամեթոդաբանական և կիրառական առաջարկների խորացման բնույթ: Վերջիններս էապես չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը և կարող են դիտարկվել որպես հետազոտության հետագա զարգացման, մեթոդաբանական հստակեցման ու կիրառական առաջարկների առավել իրագործելի դարձնելու ուղղություններ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ ենք համարում արձանագրել, որ Արմեն Արարատի Միրզոյանի՝ «Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել Պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական և գիտականորեն հիմնավորված հետազոտություն է, որում առաջադրված նպատակը և խնդիրները, ընդհանուր առմամբ, պատշաճ մակարդակով լուծված են:

Բացի այդ, ատենախոսության մեջ ներկայացված են քաղաքական կայունության տեսամեթոդական հիմքերի, դրա չափման մոտեցումների, Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության միտումների, ինչպես նաև Իսրայելի ինստիտուցիոնալ փորձի՝ Հայաստանի պարագայում հնարավոր կիրառման վերաբերյալ համակողմանի վերլուծություններ: Միաժամանակ, աշխատանքն աչքի է ընկնում տեսական մոտեցումների լայն ընդգրկմամբ, էմպիրիկ նյութի զգալի ծավալով, քանակական տվյալների և միջազգային ինդեքսների կիրառմամբ, ինչպես նաև կիրառական նշանակություն ունեցող առաջարկությունների մշակմամբ:

Մեր կողմից ներկայացված դիտողությունները հիմնականում վերաբերում են հետազոտության առանձին տեսամեթոդաբանական դրույթների խորացմանը, կիրառական առաջարկությունների իրագործելիության լրացուցիչ հիմնավորմանը և որոշ

վերլուծական շեշտադրումների հստակեցմանը, որոնք չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը և կասկածի տակ չեն դնում հետազոտության հիմնական արդյունքների նշանակությունը:

Հավելենք, որ ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները արտացոլված են Հեղինակի վեց գիտական հրապարակումներում, իսկ աշխատանքի կառուցվածքը, բովանդակությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը համապատասխանում են քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին:

Այսպիսով, գտնում ենք, որ Արմեն Արարատի Միրզոյանի «Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել Պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում» թեմայով ատենախոսությունը կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության, իսկ Հեղինակն արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՊՏՀ սոցիալական և վարքաբանական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վ. Աթոյան

Քաղաքական գիտությունների դոկտոր Վ. Աթոյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար

Ն. Դարբինյան

«29» հունվար 2026 թ.